

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлис, Редакция «Мшакъ».

կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

Սրանով յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը մեր այն բարեկամներին և
յարգելի ծանօթներին, որոնք յարգելին մեր թանգաղին հօր՝

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԱԴԵՈՍԵԱՆՅԻ

յիշատակը իրանց ներկայութեամբ թէ թաղման և թէ միւս ծիսակատարութիւնների
ժամանակ:

Որդիք նորա Թադէոս—Օվակիմ Թադէոսեանց

ԲՈՎԱՆԴԱՌԹԻՒՆ

Ընդարձակ ծաւալով փորձեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մեր պահպանողականները. Մա-
տենագրութիւն. Նամակ երեսանից. Նամակ
Բազուկից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Սրտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Յովհաննէս Այվազովսկի.

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՄԱՆՈՎ ՓՈՐՁԵՐ

Ախալքալաքի գաւառին, որ ենթարկւել է
երկրաշարժի աղէտի սոսկալի հարուած-
ներին, այս տարի վիճակված է ընդարձակ
տարածութեան վրա հետաքրքրական և
կարեւոր փորձեր անել, որոնք պէտք է մեծ
նշանակութիւն ունենան ապագայի համար
և ազդեցութիւն պէտք է գործեն ամբողջ
շրջակայքի վրա: Վնասված տեղերում ինչ-
պէս յայտնի է, պէտք է շինվեն տները
նոր եղանակով, գիւղերի մէջ պէտք է բաց-
վեն կանոնաւոր փողոցներ և դաշտերը
սերմանելու համար գործածվեն նոր սեր-
մանացուներ: Տները շինվելու են կոնկրետ-
մի քանի շաբաթից յետոյ, իսկ դաշտերի
սերմանելը արդէն սկսված է, ուստի առ-
այժմ կենտրոնացնենք մեր ուշադրութիւնը
այդ վերջին կէտի վրա, իբրև հերթական
հարցի վրա:

Փորձերը պէտք է կատարվեն ընդարձակ
մի տարածութեան վրա, որի լայնութիւնը
և երկարութիւնը 20—30 վերստ պէտք է
լինի: Դա մի այնպիսի ընդարձակ փորձ-
նական կայարան է, որ պարունակում
է իր մէջ ամեն տեսակ պայմաններ, օրի-
նակ զանազան բարձրութիւն ունեցող դաշ-
տայրեր, խոնավութեան աստիճանի և
արեգակի լուսաւորութեան ոյժի ամեն
տեսակ տարբերութիւններ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Հայ ազգը իր երկարատեւ գոյութեան ըն-
թացքում տուել է շատ նշանաւոր գործիչներ,
որոնք մեծ անուն և հռչակ են ստացել իբրև
պետական մարդիկ, գիտնականներ, ազգայնա-
ւոր զորավարներ: Հայի բնաւորութեան մէջ
մենք շատ հին ժամանակներից նկատում ենք
կամօգոյութեան յատկութիւններ. նա զգում
է, որ ապագայը գործադրել կարելի է ամեն
տեղ, ուր յարմարութիւն կայ. նա չէ փախ-
վում իր հայրենիքի սահմաններում, իր ազ-
գակիցների նեղ շրջանում: Օտար երկրների տակ
էլ, օտարի հիւրանէր տան մէջ էլ նա նոյն իսկ
աւելի մեծ եռանդով զարգացնում է իր շնորհ-
քը. նրա մէջ հանրամարդկային քաղաքացի
կայ: Պարոյր Հայկազնը հռչակվում է իբրև յու-
նաց հետադուր և արձանի է արժանանում Հոս-
մուժ Բիւզանդական դահլի վրա նստեցին մի-
շաբաթ հայ կայսրներ, որոնցից նշանաւոր է մա-
նուէր Յովհաննէս Չաչկի: Նոյն իսկ իսլամի
դաժան տիրապետութեան մէջ էլ նա նշանա-
ւոր դեր կատարելու հնարաւորութիւնն է
գտնում, և պատմութիւնը վկայում է, որ իս-
լամից առաջին արաւաւոր երեսադէմը
լինեց մի հայի ձեռքից, որ Եգիպտոսի տուր-
անի զորավարն էր և որի հայրը այնքան
ազգու գիւրդ էր բռնել արքունիքում, որ Ե-
գիպտոսի իրական տէրն էր: XIX դարի սկզբից,
սկսած այն օրից, երբ Ռուսաստանի տիրապե-

կարեւոր է նկատել, որ փորձնական ցանք-
ները պէտք է կազմեն գիւղական ընդհա-
նուր ցանքերի 1/8—1/5 մասը, այնպէս որ
եթէ այդ փորձերը ցանկալի աջողութիւնը
ունենան, այնուամենայնիւ ազգաբնակչու-
թեան վնասը քիչ կը լինի, որովհետեւ հո-
ղի մեծագոյն մասի վրա ցանված են տե-
ղական հացահատիկներ:

Փորձի համար բերված ցորենը 6000 պուդ
է: Նա բերված է Ստաւրոպոլի նահանգից,
ունի խոշոր հատիկներ, բաւարար կշիռ
(մի չեւոթերիկի մէջ 51—52 ֆունտ), չէ
վախենում քամուց, ցորտից և չորութիւնից
և տալիս է իր տեղում մէկին 8—12
հատիկ, երբեմն և աւելի: Արդե՞ծ
նա նոյնքան բաւարար կը լինի Ախալքա-
լաքի գաւառում, այդ ցոյց կը տայ այս
տարվայ փորձը: Տեղական ցորենը, ինչպէս
յայտնի է, ունի փոքր սերմ և տալիս է
մէկին 4—5 հատիկ:

Որպէս զի առաջկայ փորձերը ուսանելի
դասն են պիտանի ու համագեցողիչ լինեն
եղրակացութիւններ կազմելու համար, ան-
հրաժեշտ է, որ նրանք կատարվեն կանո-
նաւոր կերպով և հաստատ ծրարով: Տե-
ղական կոմիտեները պէտք է մանրամասն
արձանագրի թէ ո՞ր գիւղացին որքան է
ցանել, ի՞նչ տարածութեան վրա, ե՞րբ է
կատարվել ցանքը, երբ են դուրս եկել ա-
ռաջին ծիւրերը, ե՞րբ է հասել սկսել կազ-
մակերպվել, ե՞րբ է նա վերջնականապէս
հասել, և որքան հունձ է նա տուել: Մի
և նոյն ժամանակ պէտք է նշանակի տե-
ղական սերմից զոյացած հացարոյսի զար-
գացման համեմատական տարբերութիւնը,
ուշը դարձնելով թէ ծղոնի և թէ հատիկի
յատկութեան վրա: Գիւղացիները ի միջի
այլոց պէտք է աչքի առաջ ունենան մի
հանգամանք, որ սերմը պէտք է ցանել ա-

տութիւնը հաստատվել կովկասում և պա-
տերազմական գործողութիւնների մի լայն
դաշտ բաց արաւ, հայերից մի խումբ նշանա-
ւոր գիտնորական գործիչներ դուրս եկան, ո-
րոնք մեծ անուն ստացան և պատմական անձ-
նորութիւններ դարձան: Ռուսաց միջնորդների
շարքում, ինչպէս յայտնի է, եղան երկու հա-
յեր, մէկը ներքին գործերի մինիստր Լօրիս-
Մէլիքով, միւսը ժողովրդական լուսաւորու-
թեան մինիստր Դէլիանով:

Հայ հանձնարք մասնակցութիւն է ունեցել և
գեղարուեստական գործունէութեան մէջ: Եւ
այդտեղ, այդ խաղաղ ասպարէզում, որ յունի
հայրենիք ու ազգային որ և է նեղ հանգա-
մանը, համախառնային հռչակ ստացաւ. նկա-
րիչ Յովհաննէս Այվազովսկին, որ մեռաւ ներ-
կայ ապրիլի 19-ին, ինչպէս երէկ հաղորդեց
մեզ հեռագիրը:

Այս հանձնարք արուեստագէտը երկար ապ-
րից, հասաւ խորին ծերութեան, և միայն
մահը խլեց նրա ձեռքից կախարդիչ վրձինը:
Հետաքրքրական է այդքան բեղմնաւոր կիսնա-
քի պատմութիւնը. հետաքրքրական է տեսնել
թէ ինչպէս Այվազովսկին դուրս եկաւ հայ հա-
մեստ ընտանիքի անշարժութիւնից և հասաւ
այն աստիճանին, որ այսօր նրա մահը մի ա-
հալին, անփոխարինելի կորուստ է ամբողջ
Ռուսաստանի համար և արձագանք կը գտնէ
Եւրոպայի բոլոր անկիւններում և Ամերիկայում,
ուր նա ունի վերին աստիճանի պատկառելի
անուն:

Հռչակաւոր նկարչի կենսագրութիւնը շատ
և շատ անպակ է տպւել Ռուսաստանի և ար-
տասանների բազմաթիւ պարբերական հրա-
տարակութիւնների մէջ: Մենք աւելի լաւ հա-
մարեցինք դիմել նրա այն մանրամասն ինք-
նակենսագրութեան, որ տպւած է «Ры-

կելի նստք, աւելի ցանցաւ, քան նրանց
մօտ ընդունված է:

Եթէ ձիւղ գիտողութիւններ չը կատար-
վեն, այն ժամանակ փորձերի իսկական ար-
ժէքը կը մնայ անորոշ և միայն յայտնի կը
լինեն նրանց ընդհանուր արդիւնքները
վայրկեանից կերպով: Սխտեմական կերպով
կատարած տեղեկութիւնների միջոցով կա-
րելի կը լինի բացատրել այս կամ այն
գիւղացու ստացած արդիւնքների տարբե-
րութիւնը և վերջնականապէս որոշել թէ
ո՞ր աստիճանի պիտանի և յարմար է Ախալ-
քալաքի սարահարթի համար Ստաւրոպոլի
նահանգից բերած սերմը:

Տեղական կոմիտեի վրա պարտք կայ
կազմակերպել այդ գործը լուրջ կերպով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ «ՊԱՀԱՆՈՂԱԿԱՆՆԵՐԸ»

III
Ինքն ըստ ինքեան «դէպքը» փոքր է, բայց
շատ բնորոշ է մեր պահպանողական» կոչված-
ների հասարակական տեսութիւնը պատկե-
րացնելու համար:

Իրողութիւնը, երեւի, յայտնի է ընթերցողին:
Մօսկվայի գաղութին հարկաւոր է մի քանա-
նայ: Այս ձեռնարկը սկզբում կայացած ծիսակա-
նների ընդհանուր ժողովում անցաւ պահպանող-
ականների թեկնածուն—Թիֆլիսի քահանա-
ներից մէկը: Ժողովը կանոնաւոր էր, ուստի
այդ քահանայացուի թեկնածութեան չը հա-
մակողմնեցող հաշիւները ժողովի կայացրած ո-
րոշման հետ և չիտակ մարդկանց վայել պար-
զութեամբ խնդրել վերջացած համարեցին:
Անա ինչպէս ցոյց տուին մեր ազատամիտները,
որ ամբողջ գլխով բարձր են կանգնած իրանց
հալաւակորդներից: Ուղիղ ճանապարհ, օրինա-
կանութիւն և բաց ճակատով մաքառում—ա-
նա դրանց ընդունած սակաւիւն:

Սակայն մեր պահպանողականների» ուրա-
խութիւնը կարճատեւ էր. նրանց թեկնածուն
ինչ-ինչ պատճառներով չուզեց զայլ Մօսկվա
կրկին խնդրել մնաց բաց: Այս անգամ հրաւի-
րված ընդհանուր ժողովում ձայների ահալին
մեծամասնութեամբ անցաւ պ. Ահարոնեանց:
Մի քանի պահպանողականների» գործ դրած
բոլոր կեանքները և անուանարկութիւնները
անդոր էին պղծորեղութեան ծիսակալների
Ընդհանուր ժողովի կանոնաւորութեան դէմ:

Ская Старина» ամսագրի մէջ, 1878 թ.ին:
Լինելով հանգուցեալ նկարչի թեկադրութեամբ
գրված մի ճիշդ պատմութիւն, այդ կենսագրու-
թիւնը, ի հարկէ, զուրկ է այն բազմաթիւ ա-
նկիւններից, առասպելներից ու չափազան-
ցութիւններից, որոնցով այնքան հարուստ են
նրա անթիւ կենսագրութիւնները:

I
Այվազովսկու նախնիքները թիւրքահայաւան-
էին և մասնաւորապէս Դրանց մասին ճիշդ
տեղեկութիւններ չը կան, և մենք չը գիտենք
թէ ինչպէս պէտք է բացատրել մասնաւորապէս
լինելու հանգամանքը. արդե՞ծ այդ ընտանիքը
մասնիկ սկանացած հայերից էր, որ յետոյ էլ
վերաբարձաւ իր քրիստոնէական կրօնին, թէ
իսկապէս թիւրքական ծագում ունէր և ապա
հայացաւ—մի հանգամանք, որ շատ անհաւա-
նական է թիւրքական շարունակ է այն, որ
այդ նախնիքները XVIII դարում թիւրքալից
գաղթեցին Գալիցիա, ուր մինչեւ այժմ էլ
կենդանի կամ կ'օվ քաղաքի մօտ, կան կա-
լուածատէր Այվազովսկիներ: Երեւի հէնց այդտեղ
էլ Այվազեան ազգանունը ստացել է լեհական
ծէ—Այվազովսկի:

Կօնստանտնոյ Այվազովսկին, նկարչի հայրը,
իր եղբայրների հետ ունեցած անհամաձայնու-
թիւնների պատճառով, երիտասարդ ժամանակ
տեղափոխվեց Գալիցիայից և բնակութիւն
հաստատեց Վալարիւնայում և Մօզլավայում:
Նա առեւտրական էր, շատ լաւ գիտէր բացի
հայերէնից նաեւ թիւրքաց, ունդարական, գեր-
մանական, հրէական լեզուները: Այնտեղից

ոչ ոք չը բողոքեց. քուէարկութիւնը կատար-
վեց դադանի և ամենամեծ կարգապահու-
թեամբ: Նոյն ժողովում կազմած և կարգա-
ցած արձանագրութեան դէմ ոչ մի բողոք չը
լսվեց: Մի խօսքով ընտրութիւնը ամեն կողմից
օրինական էր:

Սակայն մեր պահպանողականների» գուր-
չէր գալիս ընտրածի անձնակազմութիւնը, հէնց
միայն այն պատճառով, որ նա «Մշակի» աչ-
խատակից է: Inde ira.

Ինչ անել: Կաթողիկոսը հեռացրով յայտնել
էր, որ ինքը հակառակ է պ. Ահարոնեանի
քահանայանշանին: Ուրեմն այս դէպքում դիմել
հողերի իշխանութեան աշակցութեան՝ ձեռնա-
տու չէր: Եւ ահա այն պարունակը, որոնք միշտ
բարձրարարաւ ազգայնութեան էին, թէ կաթո-
ղիկոսի հեղինակութիւնն է՝ «վանան ազգու-
թեան, ապար եկեղեցւոյ»—սկսեցին հիմա այլ
երգեր երգել: Յոյսները նոր-նախիջնանցի
«հաճէ աղբար»-ներն էին, որոնք մեր ներքին
գործերից այնքան են տեղեկ, որքան չինացի
կուլինները: Խնամութեւ խնամութեւ սկսեցին մեր
ազգային ինտրիգանները ման գալ և տակից-
գլխից դուրս տալ... Բացի այդ, դիմելին իշ-
խան Աբամէլիքին բողոքով մարդիկ, որոնք
իսկի ներկայ էլ չէին գտնվել ժողովին: Թէ ինչ
են գրել անկիւնի յետեւից, այդ պարունակը,
մենք հատուտ բան չը գիտենք, թէ ան դժուար
չէ գուշակել, ի նկատի ունենալով այդ պա-
րունների մտաւոր-բարոյական ստոր մակերե-
ւոյթը... Անշուշտ ցանկալի է, որ իշխանը վե-
րադարձէր այդ ծածուկ գրութիւնները նախա-
պարտաւորապէս մասնաժողովին, որպէս զի օր
ցերեկով քննվի այն, ինչ որ գրվել է խաւար
անկիւններում: Միայն այդպէս կարելի է երե-
ւան հանել մութ անձնակազմութիւնների իս-
կական կերպարանքը: Տեսնե՞ք:

Լուսն Սարգսեան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կիսկատար հեղտ միջոց տեսնելն լեզուով կարող,
գրել և խօսել սովորելու հարցը լեզուի օգնութեամբ
աշխ. Վաղեանց, Երրորդ տպագրութիւն. 64 էր.: գինը
30 կոպէկ, Թիֆլիս 1900.

Կան գրքեր, որոնք այնքան վատ, այնքան
անբարեխիղճ են կազմված, որ մարդ կարդա-
լիս ուզում է Կարաւելի կանչել:

Այդպիսի գրքերից է պ. Վաղեանցի Само-
учитель-ը, որի երրորդ տպագրութիւնն է
այժմ մեր առաջ, երբորդ տպագրութիւն,—

Կօնստանտնոյ տեղափոխվեց Կրիմի Թեոդոսիա
քաղաքը: 1812 թ.ականին այդտեղ սկսվեց
ժամատախտ, որի պատճառով նա գրկվեց իր
կարողութեան մեծ մասից: Եւ նա արդէն հա-
րուստ չէր, աննշան առեւտրական գործեր ու-
նէր, երբ 1817 թ.ականի յուլիսի 17-ին նրա
սեփական փոքրիկ տան մէջ ծնվեց Յովհան-
նէսը: Դա Կօնստանտնի երրորդ արու գա-
ւալն էր. հինգ տարի առաջ ծնվել էր Գա-
րիէլը, որը, ինչպէս յայտնի է, մեր գրականու-
թեան մէջ ունի լեզուագէտի հռչակ և մեծաւ
թիֆլիսում, ուր վարում էր Վրաստանի և ի-
մերթիւմ հայոց առաջնորդի պաշտօնը:

Յովհաննէսի մանկութիւնը անցաւ Սև ծովի
ափին, ծովի, որի տեսարանները անմահացրին
նրա վրձինը: Նրա մէջ շատ վաղ զարգացաւ
սէր դէպի երաժշտութիւնը և նկարչութիւնը.
10—12 տարեկան հասակում նա, առանց ու-
սուցչի օգնութեան, սովորեց ջութակի վրա
նուագել և պարապում էր նկարչութեամբ, օ-
րինակելով զանազան վիճառի պատկերներ,
որոնք ներկայացնում էին կամ Յունաստանի
անկախութեան համար սկսված ապստամբու-
թեան քաջ առաջնորդներին կամ 1828—1829
թ.ականների ռուս-թիւրքական պատերազմի
տեսարանները:

Չը բաւականանալով թղթի վրա մատիտով
նկարելով, պատանի Յովհաննէսը մի անգամ
իրանց տան դրսի պատի վրա նկարեց մի վի-
ւոր՝ բնական մեծութեամբ: Կարծես այդ նկա-
րը դուրս էր հանվել այն նպատակով, որ ու-

третое (!) издание, ինչպէս տպւած է գրքի երեսին:

Որքան ուսումնասիրաւ եւ մի եւ նոյն ժամանակ որքան միամիտ պիտի լինի մի հասարակութիւն, որ հնարաւոր լինի այդ աստիճանն անհորձ, այդ աստիճանն անպէտք գրքի երրորդ տպագրութիւնը:

Երեւակայեցէ՛ք մի պարոն, որ այնքան գիտէ ուսուցիչ, որքան լոտո խաղալով ուսուցիչն սովորած մի կէկէլ, եւ այնքան բոբիկ է հայերէնից, որ չը գիտէ, թէ «գորգալին» հայերէն ասում են հիւսն, «կնքած տղային» — ասնիկ, «ձեր լիւնը» — պատու եւ թէ յատուկ սրտով են ոչ թէ «լըծնիւն», այլ խոտակոտիկ, — երեւակայեցէ՛ք այդպիսի մի պարոն եւ ասացէ՛ք ինչ անուն պէտք է տալ այդ պարոնին, եթէ նա յանգնում է ուսուցիչի դասագիրք կազմել հայերի համար:

Բայց բերե՛ք մի քանի օրինակներ պարոնի դասագրքից:

Фамилие (Ֆամիլիէ) — ազգ (13 եր.), грибешокъ (գրիբիշօկ) — ամառ (15 եւ 26), ասեզանիւ — չաշափուռ (17), սափանիւն — մեղքանալ (17), վիկի — թերթերունքներ (18), բլագո-վիչենիւն — վերափոխում (20), սիրու միտուտ, միտուտ (21), օշաւ տրտալեա (22), նէշտո — ոչ ինչ, չտոտ — ինչ ոչ (23), նէկտո — ոչ ոք, կտոտ — ով (24), բեդիւկ (24), զեմիւնիւկ (25), պլոչաղկա — փողոց (25), կաստրիւ — ուստաց պլինձ (26), տեղաւորինա — հորդթ (28), ցիպլ-իւնօսկ — վառիկ, ուսկա — սաղ, գուս — բար, ֆազան — կաթալ (28), կուրապատկա — վարդիկ հաւ (29), սարեզալ ցիպլիւնկա (35), վէրիտ Բօզա (36 եւ 43), կօֆէ սա պլիվով (51) եւ այլն:

Գուցէ հետաքրքրվէ՛ք ուսուցիչի հոլովումով: Անա ձեզ մի օրինակ արական (?) բառերի հոլովումները — зерно (զէրնօ) — հատիկ, зерна (զէրնա) — հատիկ, зерны (զէրնի) — հատիկներ, зерновъ (զէրնօվ) — հատիկներ:

Ինչ վերաբերում է չեչտերին, ճիշդ են գրված միայն միամտի բառերի չեչտերը, իսկ ուղղագրութեան կողմից պ. վազեանց կարող է մրցել այն աշակերտուհու հետ, որ գրում էր КОРОВА բառը ֆօով:

Բացի այդ՝ շատ ուրիշ գիւտեր էլ է արել պ. վազեանց, օրինակ, որ նա թը (ֆատաշեն) կերակուր է (24), սկիւրը (բէլկա) եւ մուկը՝ ձուկ են, սողուն կամ գեղուն (29), ստորագրութիւնը (բօպիւկա)՝ դասական պիտոյը կամ առարկայ եւ այլն:

Մի բան է ամենից զարմանալին, — ինչպէս է կարողացել պ. վազեանց տեղաւորել այդքան սխալներ 64 երեսուս: Այդ էլ մի ընդունակութիւն է:

Տ. Յ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Ապրիլի 10-ին

Ընթերցողը երեւի յիշում է այն «սուրբը», որ յայտնվել էր Երեւանի մօտ Նօյրեղու գիւղի մի տան մէջ: Եւ սիւնի միջից պատգամներ էր խօսում ժողովրդին: Այդ մասի պրիստաւի ձեռք առած ջանքի շնորհիւ՝ սուրբը,

չաղորդութիւն հրաւիրէ տաղանդաւոր երեխայի զրա: Անցնողները մեծ հետաքրքրութեամբ նայում էին նկարին: Ուշադրութիւն դարձրեց եւ ճարտարագետ Կօխ, որ ծանօթ էր Յովհաննէսի հօր հետ: Նա մի քանի ցուցմունքներ տուեց պատանի նկարչին եւ այս առաջին դասերը շատ օգտակար եղան նրա համար: Այդ ժամանակ էլ Յովհաննէսը սովորում էր Թէոդօսիայի դպրոցում, ուր բացի ուսուցիչ լեզուից, ջանասիրութեամբ պարապում էր եւ հայոց ու թիւրքաց լեզուներով: Ազատ ժամանակները նա նուիրում էր երաժշտութեան ու նկարչութեան:

Մի անգամ քաղաքագետ Ալէքսանդր Կաղ-նաչեւի, Ալվազօվսկու տան մօտով անցնելիս, տեսաւ պատուհանում նստած պատանուն, որ ամուսն էր ջուլթակի վրա: Դա Յովհաննէսն էր. տեսնելով քաղաքագետին, նա ամաչեց եւ թազցրեց ջուլթակը մէջքի ետեւում, բայց Կաղ-նաչեւի քաղաքագետութեան խնդրեց նրան շարունակել եւ գովեց նրա ընդունակութիւնը: Այդ օրից երկու շաբաթ անցած, ճարտարագետ Կօխ, այցելելով Կաղնաչեւին, ցոյց տուեց նրան Յովհաննէսի նկարները: Քաղաքագետը կամեցաւ ծանօթանալ չնորսյալ պատանու հետ, եւ սա միւս օրը իր օրը եւ Կօխի հետ գնաց նրանց մօտ: Այդ օրվանից Կաղնաչեւի վերջնում է Յովհաննէսին իր հովանաւորութեան տակ: Փոքրիկ եւ աղքատ նկարիչը յաճախ լինում էր իշխանաւորի տան հիւրը եւ մօտեցաւ նրա ընտանիքին: Մի տարուց յետոյ

որը իրան սուրբ Սահակ էր անուանում, մի առժամանակ անհետացաւ եւ ժողովրդի մէջ խաղաղութիւն տրեց, բայց անա մի շաբաթ է, ինչ նորից նոյն տեղում յայտնվել է նոյն սուրբը եւ սկսել է իր պատգամները: Պատմում են, որ այս անգամ ժողովուրդը աւելի է հաւատացած եւ մեծ խմբերով այցելում է այդ տունը ազօթիւս: Յաւակն այն է, որ Ղա-մարու գիւղից նոյն իսկ նրանք, որոնք առաջին անգամ չէին հաւատում այդ խաղաղութեան, այս անգամ հաւատալով հանդերձ, աշխատում են օրիշնորհիւ եւս համոզել:

Շատ բարի: Ենթադրեմք, որ ամբողջ — օրը գիտութեան այդ սուրբը — այլ կերպ էլ վարվել չէ կարող ու իր հասկացողութեամբ եւ աշխարհայեցողով անկարող է բարին ու չարը տարբերել, իրականը երեւակայութիւնից դատել: Բայց միթէ այդ նոյն նախապաշարմունքին ենթակալ են նաեւ մեր սրբազան հայրերը եւ հայր սուրբերը, որոնք, այսպիսի բաներ լսելով, չեն ուզում տեղիից շարժվել եւ այս լուսաւոր դարում այս տեսակ մտորակաշարժումն զէմ անել: Չէ՞ որ այդ մասին նոյն իսկ կառավարութեան կողմից տեղեկութիւն է տրվել մեր հոգեւոր հայրերին, ինչպէս ղեկավարելով մէկին այդ գիւղը եւ ցրել ժողովրդի այդ նախապաշարմունքը: Միթէ մէկին չէ կարելի ուղարկել յիշեալ գիւղը, պրիստաւի օգնութեամբ աշխատել բանալ այդ գաղտնիքը եւ ազատել ամբողջ այդ մոլորութիւնից: Բայց ինչ ենք ասում: Հապառ ով առաջ տանէ՞ք այն խոտովութիւնները, որոնք ստեղծվում են զրանց չըջանում ամեն օր եւ նոյն իսկ ամեն ժամ: Ապա ով գործէր անհերքելի յանցանքներ, ով նիւթէր դարաններ, ով ստեղծէր տեղւոյ պատմութիւններ: Երանի չէր, որ մեր հոգեւոր հայրերը իրանց հասկացողութիւններով բարձր լինէին խաւար մասալից, նրանց խելքի մէջ նստած խաւարի եւ նախապաշարմունքի զէմ կուրու համար անգոր են նոյն իսկ աստուածները: Երանի կը լինէր, որովհետեւ այն ժամանակ ամեն բան կը վերագրէինք տղիւնութեանը: Բայց այժմ վեղար ծածկողները տղեւներ չեն, նրանք ձեւաւոր են աւարտել, համալսարան տեսել, արտասահման եղել, եւ այդ գիտութեան զենքով զինված՝ սեղան են բարձրանում: Ի՞նչ քաղաքագետ: Բայց ինչ ենք լսում քաղաքի մէջ. հայր սուրբը իր ընկերի տեղի արարքն է պատմում, անխնայ ընթացում, զրգարանում: Եկեղեցու սեղանից լսում էք չարախօսութիւն: Անա ինչի են ընդունակ մեր սեւագլուխները:

Ա. — Դօ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅԸ

Ապրիլի 10-ին

Ինչպէս յայտնի է բոլորին, իւրաքանչիւր հանգուցեալի վրա սովորութիւն է դարձել պսակ դնել: Ննջեցեալը, լինի դա յայտնի գր-րող, ազգային գործիչ, հարուստ թէ աղքատ, բարեբաղ թէ ամենամեղքին խեղճ մարդ, այդ մի եւ նոյնն է, սակաւ բացառութեամբ ամեն մէկի վրա էլ պսակ են դնում: Հասկանալի է,

քաղաքագետը ստացաւ Ֆաւորիկան նահանգապետի պաշտօնը եւ, տեղափոխվելով Սիմ-ֆերօպօլ, տարաւ իր հետ եւ Ալվազօվսկուն, որ մտաւ տեղական պիմաղղան: Սիմֆերօպօլում ծանօթների չըբանը աւելի եւս մեծացաւ. նահանգապետը մտցնում էր Յովհաննէսին տեղական նշանաւոր աղտուկանների տները, իրանցիկ մէկն էր այդ իշխանութիւնի նախախնայ: Մի օր Ալվազօվսկին ասաց իշխանուհու որդուն, թէ ինքը հրէաներ կը նկարէ եւ հէնց այդտեղ էլ ձեռաց նկարից պիտագո-լայում եղող հրէաների մի խումբ: Երիտա-սարդ իշխանը ցոյց տուեց այդ նկարը իր մօ-րը, որի վրա Ալվազօվսկու տղանգր այնքան խոր տպաւորութիւն թողեց, որ նա գիտեց հոգ տանել այդ տաղանդի ապագայի մասին:

Ալվազօվսկու նկարները իշխանուհի Նարիշ-կինա ուղարկեց Մօսկվա, ճարտարագետ Տօն-չինի, ինչպէս իր երիտասարդի մասին բարե-խօսել ինքնապետի մօտ: Տօնչի նկարները յայն-նեց իշխան վօլիմսկուն, իսկ սա ներկայաց-րեց Նիկօլայ I Կայսրին: Կայսրը, բարեհաճու-թեամբ վերաբերվելով երիտասարդ նկարչի ա-ռաջին փորձերին, հրամայեց ընդունել Ալվա-զօվսկուն գեղարուեստների Ակադեմիայում իր-րեւ թղալաւոր իր սեփական կարելիքով:

Ալվազօվսկին, կիսատ թողնելով գիմնալիս-կան ուսումը, տեղափոխվեց Պետերբուրգ 1833 թ-ի ամառը:

Այդտեղ նա, մի համեստ աշակերտ, որ ապ-րում էր Ակադեմիայում, դարձնում է իր վրա

որ պսակ դնելը ննջեցեալի յիշատակը յարգե-լու համար է. բայց, ասացէ՛ք խնդրեմ, միթէ չէր կարելի այդ նոյն ննջեցեալի յիշատակը յարգել ուրիշ աւելի նպատակաւոր կերպով:

Փորձեցէ՛ք կը եւ իցէ հարց տալ որ եւ է մէկի դադարել վրա պսակ դնելու համար փոք ժողովուրդներից — թէ ինչու բոլորովին գուր զը-ցում են տանեակ, հարիւրաւոր, շատ անգամ հազարաւոր բուրլիներ, մինչդեռ կարելի էր այդ փողերով շատ ու շատ աւելի կարեւոր գործեր կատարել: Նրանք ձեզ գնահատան պա-տասխաններ կը տան, թէ՛ «որովհետեւ բոլոր եւրոպական առաջնակարգ ազգերը այդ են ա-րել ու անում, ուրեմն մենք էլ պիտի հետե-ւենք նրանց բարի օրինակին», թէ՛ «սովորու-թիւն է, պիտի կատարենք» եւ կամ թէ՛ «հի-շու աշխիւնը անում է, մենք, որ ոչնչով նրա-նից պակաս չենք, չենք անի», եւ այլ այս տե-սակ պատասխաններ: Ասում ենք «գուր են դրում» այդ փողերը, որովհետեւ, այսպէս թէ այնպէս, այդ պատկերը մի օր միայն կը ծա-ռայէ իրանց նշանակած նպատակին, լինելով ի ցոյց բոլորին, իսկ յետոյ, — լետոյ անպէտք մի բան...

Բայց ինչու հէնց այդ բանում հետեւենք ա-ռաջնակարգ ազգերին, քանի որ նրանք իրանք էլ շատ լաւ գիտեն, որ մեռելների վրա պսակ դնելը միանգամայն աւելորդ է. ինչու չը հե-տեւել այնպիսի օրինակներ, որոնց մէջ աւելի ենք պահանջ զգում, մանաւանդ մենք՝ հայերս: Պսակ դնելը, ճիշդ է, սովորութիւն է, բայց չէ որ ամեն մի սովորութեան էլ չը պիտի գոյու խոնարհել եւ կամ, վերջապէս, հօ չէ կարելի երեխայական միամտութեամբ պատասխանել — «հիշու Մարկոսը չեղ պսակներ կը դնէ իր եղբոր կամ միւսի դադարին, իսկ մենք չենք կարող»։ Համաձայնեցէ՛ք, որ այս տեսակ ան-խելացի պարծենկոտութիւնը աւելի քան պա-խարակի է: Չէ՞ որ դրանով մենք զու ենք դաժնում ձեւակերպութիւններին:

Մեր կարծիքով, աւելի լաւ կը լինէր այդ հարիւրաւոր բուրլիները, որ ծախվում են «ը-սակներ» վրա, գործադրվէին գիտակցաբար այնպիսի նպատակներով, որ ապագայում մենք ինքներս հիանալիք մեր արածների պողովի Միթէ այդ փողերով չէր կարելի կերակրել օրինակ, մի քանի չուսուցող ընտանիքներ: Մի-թէ չէր կարելի այդ գուժարի մի մասով ազա-տել ձեր ընկերներին մէկին Տեւեք, թէ քանի քանի գիւղական ուսումնարաններ ու հասա-րակութիւն կայ, որոնց անպայման անհրաժեշտ են փողերի գրադարաններ եւ կամ գեղատներ, միթէ չէր կարելի տարեկան այն գումարներից, որ մտնում է պսակների վրա, մի բաժին էլ հանել այդպիսի համակրելի գործերի համար: Կամ, վերջապէս, միթէ քիչ բան կայ անելու: Եթէ մինչեւ այժմ անխելացի կերպով պար-ծենկոտ ենք եղել ու հաշտվել այդ վնասակար սովորութեան հետ, գոնէ այժմ էլ է քիչ-քիչ ազատվեցէ՛ք դրանից:

Յատկացնելով պսակի փողը որ եւ է բարե-գործական նպատակի, կարելի է մի եւ նոյն ժամանակ յարգել հանգուցեալի յիշատակը, նուիրելով գումարը նրա անունով: Հաւատա-

ուշադրութիւն: Ազատ ժամերին այցելում էր իր ծանօթ արխատօղապական ընտանիքները, ուր գտնում էր խրախոյս եւ հովանաւորու-թիւն: Այդ բարեբանները մէջ նշանաւոր էր մանաւանդ Ալէքսէյ Տօնիով, որն ունէր թան-գազին պատկերների մի շատ հարուստ ժողո-վածու եւ տալիս էր Ալվազօվսկուն բոլոր հը-նարաւոր միջոցները՝ առաջնորդ գաղափարներ համար: Ամառը Ալվազօվսկին անց էր կացնում Տօնիովի կալուածքում եւ նկարում էր տեսա-րաններ ընտելիւնից: Նրա տաղանդը արագ դարձանում էր: Ակադեմիայի այն ժամանակ-վայ աշակերտների մէջ շատ էին չնորսյալ ու-սանող երիտասարդներ եւ Ալվազօվսկին, ամ-բողջապէս նուիրված իր գործին, հետու մնա-լով երիտասարդական քմահաճութիւններից, չուտով իր վրա դարձրեց եւ Ակադեմիայի նա-խագահ Օլենինի ուշադրութիւնը:

1835 թ-ականին Պետերբուրգ կեաւ Փրան-սիայի ծովանկար Ֆիլիպ Տաննըր, որ մի ճար-տար նկարիչ էր, բայց կուրաբար մարդ, փառքից կուրացած: Նա շատ լաւ ընդունե-լութիւն գտաւ Պետերբուրգում, մինչեւ իսկ Նիկօլայ Կայսրի ուշադրութեան արժանացաւ: Մի անգամ, խօսելով Օլենինի հետ Տաննէրի ծովանկար նկարների մասին, Նիկօլայ I հարցրեց թէ արդեօք Ակադեմիայի աշակերտների մէջ չը կայ մի տաղանդաւոր երիտասարդ, որ կա-րողանար աշակերտել Տաննէրին: Ակադեմիայի երիտասարդը յանձնվեց Փրանսիայի ծովանկա-

ցէք, որդուք դրանով ձեր բարոյական պարա-քը կատարած կը լինէք թէ հանգուցեալի եւ թէ ձեր կարօտ եղբոր վերաբերմամբ:

Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԻ

Այսօր, շաբաթ, ապրիլի 22-ին, առաւօտեան, Վեհափառ Կաթողիկոսը ուղևորվում է դէպի Էջմիածին:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Հայուհեալ Բարեգործական ընկերութեան վարչութիւնը մտադրել է կիրակի, ապրիլի 30-ին, Թիֆլիսի ամառային ժողովարանում վաճառ հանել ըն-կերութեան արհեստանոցի խեղճ օրորպների ձեռագործները եւ կողմնակի անձնաւորու-թիւններից ընկերութեան օգտին ստացված զանազան իրեր:

Երէկ, ուրբաթ, կայացաւ քաղաքային ուղ-րակայի եւ դուժայի ընտրած յատուկ յանձ-նաժողովի նիստը՝ քննելու մի սակագները: Այդ նիստում պարզվեց, որ մեր գինը չէ իշ-նում այն պատճառով, որ մասցու կենդանի-ներ քիչ են եկել այս տարի Լեւոքորանի դա-ւառից, իսկ Թիֆլիսի չըջակայ գաւառներում նրանց զինը բարձր է: Ժողովը որոշեց հաւա-քել նոր տեղեկութիւններ մի սակագներ պա-կասեցնելու նպատակով:

Հինգշաբթի, ապրիլի 20-ին, ինչպէս հաղոր-դում է «ЗВѢЗДА» լրագրի, մի ոմի, Ալէք-սանդր Բասիկով, գնացել է Թիֆլիսի Գ-րդ ոստիկանական մասի պրիստաւի մօտ եւ յայտ-նել, որ Արքատօքա կայարանում ծառայելիս նա սպանել է այդ կայարանի դէպօր կառավարչին, որից յետոյ նրան աղողվել է թագնալը: Այժմ խմանալով, որ այդ սպանութեան համար մե-ղադրվում է եւ ձերբակալված է մի բոլորովին անմեղ անձը, նա զրկվել է քննից եւ հանգիստ չունի խղճաւարութիւնից, ուստի եւ խնդրում է ձերբակալել իրան, իսկ անմեղին արձակել: Բասիկով ուղարկված է բանտը:

Ապրիլի 6-ին, Պարիզի համալսարանային դու-ցահանդէսում, տեղի ունեցաւ թարմ պտուղնե-րի առաջին մրցութիւնը, որին ենթարկվեցին միայն ֆրանսիական եւ ուսական պտուղները: Միւս պետութիւնների բաժինները չէին մաս-նակցում մրցութեանը: Երեւայ, որ ուսական պտուղները, ծանաւանդ կրիմից ստացվածնե-րը, ամենեւին ստոր չեն իրանց յատկութեամբ ֆրանսիականից: Առանձնապէս լաւ են համար-ված ուսաց տանձերը: Ամենալաւ համարվեց Կապուսանի խնձորների եւ տանձերի ժողո-վածուն, որը աչքի էր ընկնում թէ տեսակների զարգումով, թէ անձուրեւեմով ու համով եւ թէ տեսքի գեղեցկութեամբ: Այդ էքսպօնէն-տը ստացաւ առաջին մրցանակը:

Ստացանք Փօն-Կուլենբախի կաթնամստե-սական գաստակերտի նկարագրութիւնը «МА-МУЛИНСКАЯ ферма на Кавказе» վերնագրով: Այդ նկարագրութիւնը պատրաստված է Պարի-զի համալսարանային ցուցահանդէսի համար:

Իրեն, որպէս զի կատարելագործվի նկարչու-թեան այդ ճիւղի մէջ:

Բայց ֆրանսիացին վերին աստիճանի արհա-մարանգով էր վերաբերվում իր աշակերտին եւ աւելորդ համարելով ծանօթացնել նրան իր արուեստի հետ, ծառայեցնում էր նրան զանա-զան անկարեւոր գործերի: Այդ ժամանակ ա-րաւորների նախաձեռն Օլենինի ամենալաւով նպատակը Ալվազօվսկու առաջնորդութեան յանձնարարեց նրան նկարել մի ծովային տե-սարան, որ պիտի դրվէր աշխատային պատկե-րահանդէսում: Ձեւանալով հիւանդ, Ալվազօվ-կին առժամանակ հեռացաւ Տաննէրից եւ նուիրվեց այդ պատուիրած նկարին: Պատկե-րահանդէսի ժամանակ նրա նկարը ուշադրու-թեան արժանացաւ եւ նայողների մեծ խմբը էր գրաւում. բացի դրանից, Ալվազօվսկին ստա-ցաւ Ակադեմիայից արծաթի մեդալ: Աշակերտի այդ աղողութիւնը կատարեցրեց Տաննէրին եւ նա, առանց երկար մտածելու, գնաց Յարսկօ-Սելօ եւ գնահատվեց Կայսրի մօտ, աւելով թէ ըմբոստ է իր աշակերտը, առանց իր գիտու-թեան նկար է դրել պատկերահանդէսում: Նա այնքան փոքրոգի էր, որ ծածկեց եղելութիւնը Կայսրից, չապաց որ նկարը պատրաստված է Ակադեմիայի նախագահի հրամանով:

Նիկօլայ I, ինչպէս յայտնի է, սաստիկ կար-գապահութիւն էր պահանջում եւ բարկանում էր, երբ ստորագրեալները յանգնում էին չը հնազանդվել իրանց գլխաւորներին: Ի հարկէ՛ս այս դէպքում ֆրանսիացու մէջ խօսում էր

Նկարագրութեան կցված են կուշնիքախի տըն-
տեսութեան մէջ գտնուող կենդանիներէ՝ կովե-
րի եւ ձիերի վեց յոսանակարները: Գրքովը
տպւած է մաքուր եւ հաստ թղթի վրա:

ՍՍՄԱԿԱՆԴԻՅ մեզ գրում են. «Մեր հայ
կօթնիւն այս գատակաւն տօներին գովելի
գործ կատարեց: «Մատաղի» համար հաւաքված
փողի մի մասը յատկացրեց Սամարկանդում
գտնուող հայ զինւորներին համար թափախման
գիշերը սեղան պատրաստելուն: Այստեղ եղող
83 հայ զինւորներէ 56 հոգի միայն ներկայ
էին, մնացածները այդ օրերում բացակայ էին
բաղաբեցի»:

ԱՍԱԿԱՆԴԻՅ մեզ գրում են. «Ապրիլի
16-ին, հայ օրիորդաց ուսումնարանի դասի-
նում սիրողները տուն մի ներկայացում յո-
գուտ չբաւոր հայ աշակերտներին եւ աշակեր-
տուհիներին Ներկայացրին «Ներուանդ երկրորդ»
պատմական ողբերգութիւնը եւ «Օսկան Պետ-
րովիչը դժբախտ» կատակերգութիւնը: Ողբը
ընդհանրապէս անսպասելի լաւ անցաւ, այնպէս
որ ամբողջ ժողովուրդը գոհ մնաց: Դասի-
նի ծայրէ-ծայր լինել էր հանդիսականներով, ու-
րոնք միշտ իրանց անվերջ ծափահարութիւն-
ներով յայտնում էին իրանց գոհունակութիւնը
դերակատարներին: Ծանկալի էր, որ այսպիսի
աղի ներկայացումն յաճախ մեղանում պատա-
հէր»:

ՍՍՄԱԿԱՆԴԻՅ մեզ գրում են. «Խիստ
ցանկալի է այստեղ ունենալ մի այնպիսի քա-
նայի, որ «գործը գերադասէր խօսքից»։ Ինչ-
պէս մեր աղօթքաւոր նախկին Գեորգ քանա-
նայ Զաքարեանցը: Արժէ այս հարցին լրջու-
թեամբ վերաբերվել: Եթէ Յարութիւն սարկա-
ւազ Բէկզիւլիանց, ինչպէս գրված էր «Մշակի»
№ 66-ի մէջ, «համապատասխանում է ժամա-
նակի պահանջներին», ինչու չը ցանկալ նրան
որ առջև տեսնել ձեռնարկված մի կօթնիւնի
համար»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Սուրհանդակ» լրագրի մէջ կարդում ենք.
«Առաջին անգամ էլ, որ տեղեկութիւն-
ներ կառնենք ու կը հրատարակենք գաղթա-
կանութեան զինուորացիներու դժբաղդ վի-
ճակին վրա: Ասանց մէջ ամենէն աւելի ան-
բաղդները Ամերիկա գաղթող խորհրդակցիներն
են, որոնք երկար եւ քննադատ աշխատու-
թիւններէ վերջը մարմնական ոյժերն են եւ կո-
րովին կորնցուցած ծովային եւ ցամաքային
երկար ծանրորդութիւններ ընկել յետոյ կը վի-
րադառնան, այնքան գոհողութեանց փոխարէն
անշնչան գտնար մը տանելով իրենց հետ
Թողունք անտէր, որոնք իրենց ընտանեկան
յարկը չը հասած ծանրան կամ ու եւ տեղ մը ի-
րենց շունչը կը փչեն, հեծու իրենց սիրելի-
ներէն եւ սրտակցներէն: Այս տխուր պատ-
կերներէն մէկն ալ կը ներկայացնէ այս անգամ
մեր երուսաղէսի թղթակիցը, նկարագրելով
մահը 35 տարեկան խաղաղասէր երիտասարդի
մը, որ Ամերիկայէ կը վերադառնար: Ենթեւ որ
ընտանիքի եւ գաւառի տէր է, Ամերիկայի մէջ

աւելի նախանձը, չը կամուրջներ: Բայց ինչ
էլ լինի, նա հասաւ իր նպատակին: Կայսրը
հրամայեց իշխան Վօլիսկունս «գնալ պատկե-
րահանդէսը եւ վերցնել այնտեղից Այվազովս-
կու նկարը»: Այդ հրամանը, ի հարկէ, կատար-
վեց, նկարը վերցրվեց այցելուներին ահազին
բազմութեան աչքի առաջ:

Այդ տխուր դէպքը խօսակցութիւններին եւ
բանաստեղծներին անսպասելի իրադարձու-
թեամբ հանդիմանալով Այվազովսկին մարդ-
կանց աչքից ընկաւ. նոյն իսկ այն մարդիկ,
որոնք երէկ գովում էին նրա նկարը, սկսեցին
թշնամարար խօսել նրա մասին: Միայն Այվա-
զովսկու ընկերները չը ժողացան նրան. երկու
չաթիլից յետոյ Տաննէր այցելեց պատկերահան-
դէսը եւ այդտեղ Այվազովսկին աշակերտները
հանդիպելին նրան սուղոյնով: Տրամախաղին,
այդ ցոյցերի պատճառով, ստիպված եղաւ հե-
ռանալ պատկերահանդէսից, բայց չը համար-
ձակվեց որ եւ է գանգատ յայտնել բարձր իշ-
խանութեան:

Դժուար է նկարագրել Այվազովսկու հոգեկան
տանջանքները այդ ծանր օրակներին: Նա փա-
խաւ, փակվեց իր հետու սենեակում, սրտա-
տրոխ սպասելով նոր թշուառութիւնների, հա-
ւատացած լինելով, որ իր ամբողջ ապագան
ոչնչացաւ: Ընկերները միմիարում էին ինչպէս
կարողանում էին: Սիրտ տուեց խեղճ երիտա-
սարդին եւ յայտնի բանաստեղծ Ժուկովսկին,
որ ճանաչում էր նրան. նա խրատեց չը յու-
սահառութիւն առաջվա պէս շարունակել նկար-

թագրութեան ընտելը եւ հազիւ երուսաղէս հա-
սեր եւ հոն իր հոգին աւանդել է: Ցաւելով կը
լսենք վերադարձողներէ թէ այդ գաղթականնե-
րէ շատերն ալ, իրենց համար բոլորովին օ-
տար եւ անտարբեր եղող ժամանակներու եւ գու-
արձութիւններու մէջ մոռնալով ամէն բան,
չարաչար կը տուեն իրենց անողջութիւննէն:
Աւելցուցէք ասոր վրայ գործարաններու աշխա-
տութիւնները, եւ այն ատեն դադարաւ մը
կրնաք գոյացնել իրենց անցուցած կեանքին
վրայ: Զարմանալի բան է որ տակաւին այս
կեանքը իր հրապուրիչ կողմը չէ կորնցուցած
բոլորովին եւ ինչպէս կը լսենք, իսկ մը ընտա-
նիքներ կը պատրաստուին զարնան եղանակին
մեկնել իւրերեքէ, Ամերիկա երթալու համար:
Դժբախտաբար իւրերեք պահանջուած առաջ-
նորդը չը կայ, որ այս կէտերը անոնց հասկնէ.
աւելի զատ Ամերիկայի հոգեւոր հովուութիւնն
ալ փոյթ չըներ ազգելու համար այս գաղթա-
կաններու բարոյական կեանքին վրայ. որով
հոգ, կը բաւէ որ պատարագ մատուցանող, պը-
սակ եւ կնուր կատարող ու ննջեցեալ թա-
ղող պաշտօնեայ մը գտնուի: Առաջնորդներու,
հոգեւոր հովուներու պաշտօնը ապաւէս ճան-
չեցուած, այսպէս սահմանուած է առաջնորդի ի
վեր, եւ այսպէս ալ կը շարունակուի նոյն իսկ
այս դարուն մէջ: Խեղճ վիճակ մը, որ աւելի
կը չեւոյրի երբ այսպիսի տխուր տեղեկու-
թիւններ կը հասնին»:

«Սուրհանդակ» լրագրի հաղորդում է.
«Ձմեռը բաւական մեղմ սկսաւ. գաւառներում
մէջ, բայց կերեւաւ, որ իր բոլոր թափ պահած
էր վերջին օրերում. այսպէս որ պատահանց
ցուրտը սկսելուն հետ, ձիւն ու բուք ալ ծայր
տուեր են կարնդ մէջ: Լուռ ու ձոր, դաշտ ու
գոգիւն ձմեռով սաւանդով ծածկուեց եւ կան-
գնաչափ ձիւն նստել է գետինը: Զանաւները
այնպէս գոգուել են, որ Պապադիս սուրհանդա-
կը իր սովորական օրէն երկու օր վերջը հասել
է: Արդէն խոտ, յարդ սովոր ըլլալով, այս պատ-
ճառաւ աւելի սղեր է: Պապադիս, Ալաշկերտի,
Բասենի, Ուլայի եւ ուրիշ տեղերու բնակչաց
մեծ մասին անսանց ուսմանը սպասած ըլլալով,
տեղէ տեղ կը կը փոխադրեն եղեր գանդը
տարեցնելու համար: Եւստակից մը մեղ կը
գրէ թէ. «Նստա անստանալու անօթի կիմիսը
դարձան, ոտքի վրայ կերերան, մերթ կիման
ու կը մեռնին: Երկրագործութեան հոգին հա-
մարուող այս անստանալու պատիւը, չը-
ւարած թողած է իրենց տեղերը, որոնք ժամա-
նակ չեն գտնել քաղաք երթալու եւ գնումներ
ընելու, հետեւաբար խանութպանները մինչեւ
երեկոյ աչքերնին դուր տեսնած կը նային թէ
երբ պիտի գալ զարուհը: Վերջին շաբթուան
մէջ բաւական անձեւ եկած ըլլալով, առա-
սարակ յոյս կայ որ մինչեւ «Կարմիր հաւիթը»,
ինչպէս կըսեն հոս, ձիւնը վերանալ եւ գործ բա-
ցուի»։ Ներկայիս անհիշուեցէ ընտուած ժո-
ղովրդեան համար յայտնի է թէ որքան ծանր
կը կշռէ ձմեռն այս վիճակը: Արդէն նպատի
գիծումներ եղած են Պատրիարքարան: Մտա-
դրութիւն կայ յատկապէս շաբթուաւ բաւական
գումար մը զրկել մէկ քանի գաւառներ, ո-
րոնք ամենէն աւելի կը տեղուին ձմեռն սասա-
կութիւննէն»:

«Տրամախաղի ինքնէն էլ, որը իրեն ներ-
կայացուցիչ Կրէզօ գերարանի» հինգ տարի
շարունակ Տրամախաղում մնալուց յետոյ՝ այժմ
վերադարձել է հայրենիք հանգստանալու եւ
պատկերագրի ժամանակ ստացած վերքերից բը-
ժիկվելու, Մարսելում հետեւեալ տեղեկութիւն-
ներն է հաղորդել «Figaro» լրագրի թղթակցին:
«Անգլիայից, ասել է Լէօն, լուրեր էին
տարածում, թէ բռնները բազմաթիւ եւ շատ
զօրեղ թշուառութիւն ունեն, բայց այդ լուրերը

չուրիւր: Մի անգամ էլ հոգեկաւոր առակա-
խօս Կրիզօ, գալով Ակադեմիա, ցանկութիւն
յայտնեց տեսնել Այվազովսկուն: Նա իր մօտ
կանչեց վտայած նկարչին:

—Արի, արի ինձ մօտ, սիրելիս,—ասաց ծե-
րունին իր բարի ձայնով, եւ համբուրելով ե-
րիտասարդի ճակատը, շարունակեց.—Ի՜նչ է,
եղբայր, Ֆրանսիացին վերադարձաւ է: Ա՜հ, ինչ...
նա, բայց, Տէրը նրա հետ, մի վշտանալ:

Երկու նշանաւոր մարդկանց համակրութիւնը
շատ միմիարեց Այվազովսկուն. բայց Կայսրի
բարկութիւնը առաջվա պէս ծանրացած էր
նրա վրա: Ոչ ոք, նոյն իսկ Ակադեմիայի նա-
խագործը, չէր համարձակվում բարեխօսել նրա
մասին. վախնում էին թէ մի գուցէ աւելի
մեծ փորձանք գալ նրա զիւրի, եթէ նրա ա-
նունը նորից տան Կայսրի մօտ: Միայն 1836-ին
Այվազովսկին ունեցաւ մի պաշտպան, որ ա-
զատեց նրան այդ անտանկի դրութիւնից:

Դա Ակադեմիայի պրօֆէսոր Զաուէրվէյզն
էր: Նիկոլայ Կայսրը շատ բարեհաճ էր դէպի
նրան եւ նա նկարչութիւն էր դաս տալիս
մեծ իշխաններին ու իշխանուհիներին: Չը
մարձակվելով անմիջապէս խօսել Կայսրի հետ
Այվազովսկու մասին, Զաուէրվէյզն մեծ իշխան-
ներին եւ իշխանուհիներին հաղորդեց երեա-
սարդ նկարչին հանդիպած դժբաղդութիւնը եւ
ինչպէս նրանց ողորմած ուշադրութիւնը: Նը-
րանք իրանց կարեկցութիւնը յայտնեցին, բայց
չը խոստացան բարեխօսել իրանց ծնողի մօտ,
վախնալով նրա բարկութիւնից: Բայց այդ

ձիւղ չին: Հակառակորդներին զարնուրիլ գո-
նորով նկարագրելով՝ անգլիացիները կամենում
էին ցոյց տալ աշխարհին, թէ մի շատ գծաւոր
պատկերագր եւն ձուռն Այն ինչ, իսկական, բո-
ւենները պատերազմ սկսեցին 30—40 հազար
մարդով: Ինչ վերաբերում է հարաւ-արօրիկա-
կան հանրապետութիւնների թշուառութիւնին,
պէտք է ասել, որ նրանց թիւը շատ սահմա-
նափակ է: Բայց եւ այնպէս կայ մի հանգա-
մանք, որ տամապատիկ աւելի մեծ նշանա-
կութիւն է տալիս բռնների թշուառութիւնի
ոյժին եւ դա նշանաւորութեան ճշգրտութիւնն է,
որից ոչինչ չէ կարող վերաբեր. Բռնները, ասել
էժօն, յոյս ունեն, թէ եւրոպական պետու-
թիւնները կը միջամտեն. բայց եթէ նրանց
յոյսերն ունայն անցնեն, այն ժամանակ շատ
կարելի է, որ նրանք հրաժարվեն իօհաննես-
բուրգի եւ Պրետորիայի պաշտպանութիւնից ու
խմբով գնան Լէզենբէրգ, մի լեռնային եւ
անմատչելի երկիր, որը գտնուում է Տրանսվա-
լի հիւսիսային կողմում, ուր անգլիացիներին
անհնար կը լինի մտադ գործել եւ կուշի նը-
րանց հետ: Այնու ամենայնիւ, Լէօն մեծ յոյս
ունի, որ բռնները կը կարողանան յաղթել
անգլիացիներին Օրանձեան հանրապետութիւնն
մէջ ռազմավարութեան այն եղանակով, որին
հետեւում են նրանք այժմ, այսինքն ստիպե-
լով անգլիացիներին փոքրաթիւ զօրախմբերի
բաժանել իրանց զօրքը եւ ապա առանձին ա-
ռանձին յաղթել այդ զօրախմբերին: Բռնների
միացեալ ոյժերի այժման հրամանատար Լուի
Բօտայի վրա ֆրանսիացի ինժեները ամենամեծ
վստահութիւն ունի. նրա ասելով՝ Բօտա ա-
ռաջնակարգ ռազմագէտներից մէկն է:

«Observer» լրագրի լուրջ կերպով խոր-
հուրդ է տալիս անգլիական կառավարութեա-
նը՝ օգուտ քաղել պարսից Շահի տան օր
Լօնդօնում մնալու դիտաւորութիւնից եւ աշ-
խատել պարսից մի քանի հարցեր, որոնք հա-
փազանց մեծ նշանակութիւն ունեն անգլիա-
կան շահերի տեսակէտից: Լրագրի պնդում է
պարսկական հարցի կարեւորութեան վրա ներ-
կայուն եւ անհրաժեշտ է համարում Շահի
Լօնդօն հասնելուց առաջ լսել Հնդկաստանի
փոխարքայի եւ Հնդկաստանի ստատս-սեկրե-
տարի կարծիքները: «Ռուսական փոխտու-
թիւնը, երկաթուղային հարցը եւ ամբողջ
Պարսկաստանում բրիտանական առեւտրի եւ
բրիտանական ազդեցութեան տարածումը ան-
յետաձգելի հարցեր են դարձել, որպէս Անգ-
լիայի, այնպէս էլ Հնդկաստանի համար. իսկ
այդպիսի դէպքերում ամենից աւելի կարեւոր
է հիմնադրուելու եւ լրակատար կերպով ըն-
նադատել այդ հարցերը եւ որոշումներ կա-
ցնելը: «Standard» լրագրի Բերլինի թղթակի-
ցը, խօսելով նոյն պարսկական հարցի մասին,
աւելացնում է. «Այստեղ խօսում են, թէ ուս-
տական փոխտուրութեան հետ միասին Պարս-
կաստանի եւ Ռուսաստանի մէջ կայած գաղտ-
նի զանադրութեան մէջ կայ մի չափա-
զանց նշանաւոր յօդուած, որը իրաւունք է
տալիս ուսուց կառավարութեանը զօրքեր անց-
կացնել պարսկական երկրները միմիւր, երբ եւ
ուր էլ կարենայ: Ռուսաստանը հիմա էլ մեծ
զինուորական ոյժ ունի աֆգանական սահմա-
նագծի մօտեցում, թէպէտ եւ ոչ անմիջապէս
պատերազմական գործողութիւններ սկսելու,
այլ նրա համար, որ պատրաստի զօրքեր ու-
նենալ կարեւոր դէպքում»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍՅՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

20 ապրիլի

ՄՈՍԿՎԱ. Այսօր, ժամը 11-ին, Թագաւոր

միջոցին Տաննէրի վիճակն էլ փոխվեց. նա
այնքան հպարտացել էր, որ մոռացաւ չափ ու
սահման եւ արքունիքին մօտ մարդկանց հետ
ընդհարուրեւն ունեցաւ: Նրան հրամայեցին
հեռանալ Ռուսաստանից եւ նրանից յետոյ մը-
նացին այն ծովային նկարները, որոնք Չմբա-
յին պալատի եւ Էրմիտաժի սենեակներումն է-
ին գտնվում:

Մարտ ամսին Զաուէրվէյզը, վերջացնելով մեծ
իշխանութիւնների հետ պարագլխի, պալատի
դահլիճներից մէկում հանդիպեց Նիկոլայ Կայս-
րին, որի հետ էր եւ պարսկական միմիարը:
Ողջունելով Զաուէրվէյզին, Թագաւորը կանգ
առաւ Տաննէրի մի նկարի առաջ, ասաց որ
չէ հաւանում նրան, բայց գովեց նոյն նկարի
մի այլ գործը: Համաձայնվելով Կայսրի կարծի-
քի հետ, պրօֆէսորը ասաց, որ Տաննէրից վատ
չէ նկարի «մեր առաջ նկարիչ Այվազովս-
կին»:

Կայսրի դէմքով մի ամպ անցաւ. նրա կա-
պուտ աչքերը մէջ փայտապէս բարկութիւ-
նը: Բայց անվախ, ագնիւ Զաուէրվէյզը ասաց,
որ Թէեւ Տաննէր սեւ գոյնեղով է նկարագրել
Այվազովսկուն, բայց Ակադեմիայի պրօֆէսո-
րները աւելի արգարացի կերպով են վերաբեր-
վում դէպք աշակերտները: Կայսրի բարեհաճ
ժպիտից խրախուսվելով, նա շատ լաւ վկայու-
թիւն տուեց Այվազովսկու մասին:

—Ինչու դու առաջուց չէիր ասում այդ,
հարցրեց Նիկոլայ I.

—Ձերը մեծութիւն,—պարզամտութեամբ ա-

Կայսրը Մեծ Իշխան Սերգի Ալեքսանդրովիչի
հետ այցելեց զինուորական հիւանդանոցը, որ-
տեղ նրանց դիմաորեցին հերթապահ օֆիցե-
րը, հիւանդանոցի կառավարիչ գեներալ-մայոր
Ալաւովիչ, բժիշկները եւ վերապետը:

Այսօր Թագուհի Կայսրուհին, Մեծ-Իշխանու-
հի Երեսուէտա Յէօգօրովնայի ուղեկցութեամբ,
այցելեց Նորին Մեծութեան հովանաւորութեան
տակ գտնվող քաղաքային օրհանոցը, կրաս-
նօսեակի փողոցի վրա:

ԼՕՆԴՕՆ. «Daily News»-ին հեռագրում են
Լօրէնցօ-Մարկեզէյց. «Ակնհերե է, որ բռն-
ների կառավարութիւնը մտադրել է, ըստ կա-
րելոյն, աւելի երկար դիմադրել անգլիացիներ-
ին: Լիտւենուրգեան չըլանում նրանք ամբու-
թիւններ են կառուցանում: Շնորհիւ տեղի
լեռնային դրութեան մինչեւ այժմ չէր աշտո-
վում միացնել Լեռնեւուրգը հօլանդական եր-
կաթուղային գծի հետ: Բռնները այժմ մեծ
գործունէութիւն են ցոյց տալիս հին երկա-
թուղու գծի վրա: Պարզ է, որ այդ անվում
է երկաթուղու ճանապարհը Լեռնեւուրգ հասց-
նելու նպատակով եւ, կարեւոր դէպքում, քան-
դեւու հօլանդական երկաթուղային գիծը:

«Daily News»-ին հեռագրում են Լօրէնցօ-
Մարկեզէյց, թէ այնտեղ հասել է մի ֆրան-
սիական չոգեհատ, որի վրա կան 12 բռններ:
Փայտած թիմօստաւանի բանակից, նրանք գը-
նում են Պրետորիա:

Կ. ՊՈԼԻՍ. Անմիջապէս Իզմայիլ-բէյի ճա-
նապարհ ընկնելուց առաջ, որ անգլիական հիւ-
պատոսարանի միջնորդութեամբ ընդունվեց
«Rhedival» պատաստար նաւի վրա, քաղաքա-
յին պրեֆէկտ Բէդլան-փաշան փորձեց համո-
զել նրան, որ մնա, բայց իզուր: Սուլթանը,
երեւի Իզմայիլ բարեկամների խորհրդով թոյլ
տուեց նրան հրաժարվել Տրիպօլի վաղի պաշ-
տօնից եւ գնալ արտասահման:

ԼՕՆԴՕՆ. «Times»-ին հեռագրում են Բլում-
ֆոնտէնից, թէ բռնների բոլոր ձիւրը այժմ
յարբուրն են գրաւվում: Այդ միջոցն աւելի
ներգործութիւն կունենայ, քան բնակիչներին
զինաթափ անելը եւ աւելի հեռւ իրադրօնե-
լի է:

«Morning Post»-ին հաղորդում են նոյն տե-
ղից. «Երկու նշանաւոր բովանդակութեամբ
նամակներ ընկան անգլիացիների ձեռքը. մէկի
մէջ, որ նախագահ Շահին գրել է գեներալ
Բօտային, արտունջ է յայտնվում այն բանից,
որ կրօնաւոր պահպանութեան համար թողն-
ված է սակաւագին զօրք եւ հարմարվում է,
թէ բրիտանացիները 5,000 զօրք ունեն առաջ
գնալու համար: Ապա Շահին ցաւ է յայտնում
այն առիթով, որ բռնների զօրաբաժինը, կրօն-
աւոր պաշտպանելու փոխարէն, զբաղված է
հացաւէտ չըլանները կողոպտելով եւ գրանով
անբաւականութիւն է սերմանում տրանսվալի
եւ օրանիսան բռնների մէջ: Շահին ցանկու-
թիւն է յայտնում, որ Նատալում գտնվող
10,000 բռնների մի մասը գնաց դէպի Վարե-
նենի կիւրծը, որպէս զի հանրապետութիւնների
ոյժերը կենսարանան այնտեղ եւ կարողանան
վճարական հարուած հասցնել անգլիացիներին:

—Դու յաւիտեան հանաքներով կը խօսես,
ծիծաղելով ասաց Թագաւորը:—Իսկ ուր է Այ-
վազովսկին:

—Ակադեմիայում, ձերը մեծութիւն:

—Էդուց դու կը ներկայացնես ինձ նրա
պատկերը, որ հետագրած էր պատկերահան-
դէսից:

Ուրախացած Զաուէրվէյզը վերադարձաւ մեծ
իշխանութիւնների բաժինը եւ հաղորդեց մեծ իշ-
խանուհի Մարիա Նիկոլայեւնային այդ դէպքը:
Մեծ իշխանուհին այնքան ուրախացաւ, որ
համբուրեց իր յարգելի ուսուցիչ ճակատը:

